Հայկական Բիւրոյի

ԴՐՕՇԱԿ

1901 № 7 ՀԱՅՈՑԵՄԲԵՐ

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO LIBRARY

ՎԵՐՋԻՆ ՁԱՅՆ

Հարկ ենք համարում „Ցաւելածով" հաղորդել հասարակութեան վերջին շաբաթուայ ուշադրութեան արժանի հետեւեալ քաղաքական նորութիւնները.

I. „ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԻՒՐՕՅԻ" ԴԻՄՈՒՄԸ

Հոկտեմբերի 3-ին Բէրլինի „Խաղաղութեան Միջազգային Բիւրոյն" ուղարկել է Գերմանիայի, Աւստրիայի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Իտալիայի եւ Ռուսաստանի արտաքին գործերի վիճակներին հետեւեալ դիմումը, որ, իբր պաշտօնական վաւերագիր, առաջ ենք բերում ստորագրութեամբ.

Պարոն մինիստր

Խաղաղութեան Համաշխարհային X կոնգրէսը, գումարուած Գլասկովում այս տարուայ սեպտեմբերին, յանձնարարեց մեր Բիւրոյին դիմումն անել Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւններին, որպէս զի կայացուի պաշտօնական կոնֆերանս հայկական հարցը վճռելու համար, իրագործելով 1895-ի դեկտեմբերի ծրագիրը, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ կիրառութիւն Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածի, որ վաւերացուած է Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ յօդուածի։

Աւելի քան քսան տարի է արդէն, ինչ թիւրքաց կառավարութիւնը յանձն է առել հանդիսաւոր կերպով եւրոպական մեծ պետութիւնների առաջ անյապաղ իրագործել այն բարեփոխումներն ու բարենորոգումները, որ պահանջում են տեղական կարիքները հայաբնակ գաւառներում, երաշխաւորել նրանց ապահովութիւնը և պարբերաբար զեկուցանել այս նպատակի համար ձեռնարկուած միջոցները պետութիւններին, որոնք պիտի հսկեն նրանց գործադրութեան վրայ։ Դա անշուշտ միջազգային բնաւորութիւն ունեցող մի խնդիր էր։ Արդ՝ այն ողբալի վիճակը, որը անհրաժեշտ էր կացուցել եւրոպական միջամտութիւնը յօգուտ հայերի, աւելի ևս վատթարացել է այն ժամանակից իվեր։

Հենց այդ պատճառով էր, որ անգլիական, ֆրանսիական և ռուսական կառավարութիւնները մշակեցին 1895-ի մայիսին „Մեսօրանդում" կոչուած վերոյիշեալ ծրագիրը, որը սահմանուած է երաշխաւորելու չարաչար ասնջուող հայ ազգաբնակութեան կենդանի և ապահովութեան իրաւունքը։

Դժբախտաբար, այս ծրագիրը, որ կազմուած էր Սասունի կոտորածների տպաւորութեան տակ և սուլթանի հաւանութիւնն էր դտած, չէ իրագործուել նա մնացել է մեռած տառ, ինչպէս և Բերլինի դաշնագրի հանդիսաւոր երաշխաւորութիւնը։ Կոտորածները շարունակուեցին ընդհատումներով Բիթլիսի նահանգում, օրինակ, անցեալ տարի, Մուշում և Սասունում — վերջինս։ Անհնարին է թւում, պարոն մինիստր, որ հայերի ապահովութիւնը երաշխաւորող պետութիւնները այլևս մնագործոն մնան։

Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւնները, ընդունելով մեր դիմումը իրերի սպառնալից վիճակի դէմ լրջօրէն հակազդելու նպատակով, կրկնակի ներուժութիւն մատուցած կը լինէին մարդասիրութեան գործին, քանի որ նրանք վերջ կը դնեն մի նահատակ ժողովրդի չափազանց երկարատև տառապանքներին, և մեր կողմից՝ խոստացուած ռեֆորմների իրագործումով՝ նրանք կը ջնջեն գլխաւոր պատճառներից մէկը այն փոթորիկների, որոնք կան մշտապէս թագնուած դրութեան մէջ աշխարհի այդ մասում։

Հաճեցէք ընդունել, պարոն մինիստր, մեր վստահութեան արտայայտումը դէպի Ձեր վեհանձն զգացմունքները և մեր խորին ու պատկառոտ յարգանաց հաւաստիքը։

Ի դիմաց Խաղաղութեան Միջազգային Մնայուն Բիւրոյի՝

Նախագահ ՓՐԵԴԵՐԻԿ ԲԱՅԵՌ

Գատուաւոր քարտուղար ԸՆ ԴԷԼՈՄՄԵՈՆ

II. „ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԲԻՒՐՕՅԻ" ԿՈՉԸ

Սեպտեմբեր ամսի 27-ին „Դրօշակի" խմբագրութիւնը մի ընդարձակ գրութեամբ դիմեց Բրիւսելի Միջազգային Սոցիալիստական Բիւրոյին եւ յիշեցնելով անցեալ տարուայ Փարիզի Միջազգային Սոցիալիստական Համաժողովի որոշումը՝ խնդրեց Բիւրոյին մի ընդհանուր կոչ անել եւրոպական պարլամենտների սոցիալիստ պատգամաւորներին հարցապնդումներ անելու իրենց կառավարութիւններին հայկական հարցի վերաբերեալ։ Իբրեւ պատասխան այդ դիմումի հոկտ. 18-ին մենք ստացանք, մեծ գոհունակութեամբ, հետեւեալ նամակը Սոցիալիստական Բիւրոյից, տրուած հոկտ. 16-ից.

„ԴՐՕՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ժընեվ

Քաղաքացիներ,

Գործադիր Բիւրոն այսօր իսկ հրապարակում է մի կոչ կազմակերպուած պրոլետարիատին՝ յօգուտ Հայերի։ Նա խնդրում է եւրոպական պարլամենտների սոցիալիստ պատգամաւորներին յուզել հարցը։

Այս կոչի օրինակներից դուք կընտանաք։

Խնդրում ենք ձեզ անյապաղ ուղարկել մեզ 40 օրինակ „Հայկական հարց" բրոշիւրից, որպէս զի մենք հասցնենք մեր անդամներին։

Եղբայրական բարևներով՝

Վ. ՍԷՐՎԻՆ

Ահա եւ Սոցիալիստական Բիւրոյի արձակած կոչի բնագիրը, որ կրում է հոկտեմբեր 18 թիւը.

ԲՈԼՈՐ ԵՐԿԻՐՆԵՐԻ ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ԿՈԻՄԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

Ամենաողբալի լուրեր են հասնում մեզ Հայաստանից։ 1894-96-ի մեծ ջարդերից յետոյ, որոնք աւելի քան 300,000 մարդկանց մահ պատճառեցին, կարելի էր կարծել, որ թիւրք կառավարութիւնը, որի պատասխանատուութիւնը ճշգրտուած էր աշխարհի առջև, չէր համարձակի այլևս վերսկսել նման սարսափներ։

Այն անցքերը, սակայն, որոնք նորերս տեղի ունեցան Մուշի գաշտում և Սասունի լեռներում, հաստատում են, որ սխալ էր այդ ենթադրութիւնը։ Եթէ չլինի ուրեմ միջամտութիւն, մեծ երկիւղ կայ, որ Աբդիւլ Համիդի ոճրագործ քաղաքականութիւնը աւելի ծանր անցքեր պիտի առաջ բերէ։

Եւրոպական կառավարութիւնների յանցաւոր անգործութեան դիմաց՝ սոցիալիստ դեմոկրատիան չէ կարող անտարբեր մնալ դէպի այն գարշելի արարքները, որոնք կատարուել են կամ կատարուելու վրայ են Հայաստանի թրքական գաւառներում։

Ուստի մենք օգտակար ենք սեպում յիշեցնել ձեզ այն օրակարգի խօսքերը, որ քննարկուեց 1900 թ. Պարիզի միջազգային համաժողովում։

„Փարիզի սոցիալիստական միջազգային համաժողովը, վերստին չեշտելով եղբայրական համակրութեան զգացումները, որոնք պիտի միացնեն բոլոր ժողովուրդներին, դայրոյթով բողոքում է Հայաստանում կատարուած բռնաբարութիւնների, խժդժութիւնների ու ջարդերի դէմ, եւ մատնացոյց անելով երկու աշխարհների քանդարարներին զանազան կապիտալիստ պետութիւնների ոճրագործ մեղսակցութիւնը, — հրաւիրում է պարլամենտական սոցիալիստ խմբերին ամէն մի դէպքում միջամտել յօգուտ անարդարաբար հարստահարուած հայ ժողովրդի, որին համաժողովը ուղղում է իր ջերմ ու սերտ համերաշխութեան հաւատաքը“։

Իբրև հետևանք այդ օրակարգի՝ անհրաժեշտ է, որ պրոլետարական և միջազգային համերաշխութիւնը արտայայտի մեր տրամադրութեան տակ եղած բոլոր միջոցներով։

Բերլինի գաշնագիրն ստորագրող պետութիւնները մնում են հեզ ու անշարժ այն ժամանակ, երբ նրանց յորդորում-թախանձում են գործել։

Պէտք է, որ մեր պատուիրակները բոլոր պարամենտների մէջ, ուր նրանց միջամտութիւնը կարող է ազդու լինել, յիշեցնեն կառավարութիւններին նրանց պարտաւորութիւնները կամ թէ հրապարակ հանեն նրանց մեղսակցութիւնը, որ արտայայտւում է նրանց անտարբերութեամբ։

Պապականութիւնը, որ անխռով հանդիստ է մի քրիստոնեայ ժողովրդի մարտիրոսութեան, չի գտնում մի նշանակիչ խօսք դահիճների համար, չի գտնում գթութեան մի խօսք զոհերի համար։

Պէտք է, որ բոլոր երկրներում մեր մամուլը հրապարակէ այս յանցաւոր անտարբերութիւնը։

Պէտք է, որ միջազգային սոցիալիզմը, որ պաշտպան է կանգնած բոլոր հարստահարուածների, առանց խտրութեան դաւանանքի ու ցեղի, չնայած ոչ մի միջոց՝ յուզելու հանրային կարծիքը համիդական քաղաքականութեան գարշանքների դէմ։

Զարմանալի շատ կրկնուած է արդէն, որ Հայաստանում ոչինչ չէ փոխուած։ Ինչպէս որ ասուած էր Գլասկովի համաժողովին ներկայացուած նորագոյն մի յիշատակագրի մէջ, բռնութիւններ, անգթութիւններ, կողոպուտներ, կանանց և աղջիկների բռնաբարութիւններ, գիւղերի և ագարակների հրդեհումներ, մասնակի ջարդեր ու սպանութիւններ ծանուցուած են անդադար գրեթէ բոլոր հայաբնակ վիլայէթներում և այն՝ միայն 1900 թ. յուլիսի 1-ից մինչև 1901 յուլիսի 1-ը“։

Այնուհետև դրութիւնը աւելի ևս ծանրացել է։ Նա սպառնում է էլ աւելի ծանրանալ։

Բիթլիսի, Երզրումի և մանաւանդ Մուշի և Բայազէդի կողմերում ջարդերը շարունակւում են։ Սարսափը թագաւորում է տիրականօրէն ազգաբնակութեան վրայ, որից խլել են ամէն զէնք, պաշտպանուելու ամէն միջոց՝ նրա հօտերն ու հունձքը, հողերն ու տները յափշտակելուց յետոյ։

Եւ, յամօթ Եւրոպայի, բնաջնջման այդ գործը կատարւում ու վերջանում է, առանց որ կառավարութիւնները — որոնք այնքան գործօն են, երբ կապիտալիստական շահերն են վտանգւած — ուևէ բան ձեռնարկէին՝ փրկելու հայ ժողովրդի մնացորդները։

ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐ,

Աբդիւլ Համիդի կառավարութիւնը, մամուլի մի մասի գործակցութեամբ, ձգտում է կազմակերպել լուութեան դաւադրութիւն հայկական գործերի շուրջը։

Ձեր և ձեր թերթերի ու պատուիրակների վրայ պարտք է, ընկնում խանգարել նրա այդ ընթացքը, ի լոյս հանել նրա ոճիրները և ձեր համակրանքի ու քաջալերութեան խօսքերն ուղղել նրանց, որոնք տառապում և կուռում են ապրելու իրաւունքը նուաճելու համար։

Ձեր պատգամաւորները Միջազգային Բիւրոյում հաստատած են, որ դուք չպիտի թերանաք դրանում։

Ի ԴԻՄԱՑ ԴՈՐԾԱԴԻՐ ԲԻՒՐՈՅԻ

ԷԴՈՒԱՐԴ ԱՆՍԷԼ, ԷՄԻԼ ՎԱՆԴԵՐՎԵԼԴ

Քարտուղար՝ ՎԻՆՑՈՐ ՍԷՐՎԻ

III. ՆՈՐ ԴԻՄՈՒՄ

Հաստատ տեղեկութիւն ունենք, որ Պարիզում երեք ականաւոր ֆրանսիացիներից կազմակերպւում է մի պատգամաւորութիւն, որը պիտի տեսակցութիւն ունենայ ֆրանսիական մինիստրութեան նախագահ պ. Վալդէկ-Ռուսսոյի հետ՝ հայկական հարցի վերաբերմամբ։